

Պատրիարքարանի պատուիրակին հետ Երուսաղէմ երթալ, հրաւիրելու Կիլիկիոյ Կաթողիկոս Ամեն. Տ. Սահակ Սրբազանը:

— ԱԼԱՇԿԵՐՏԻ նախորդ Առաջն. տեղապահ Մարգարեան Մամբրէ Վ., որ Վան կը դռնուի հիմա, նամակ մը գրելով Ս. Պատրիարքին, յայտնեւ է իր անպաշտօն վիճակը: Ն. Սրբազնութիւնը նկատելով որ յիշեալ վարդապետը Աղթամարի միաբան է և Աղթամարի, ինչպէս նաեւ Վանի, ընդարձակ Վիճակը պէտք ունի հոգեւոր հովիւներու, յանձնարարեց Վանայ առաջն. տեղապահ Տ. Սահակ եպիսկոպոս Բագրևանդեանի որ յարմար պաշտօն մը գտնէ յիշեալ վարդապետին:



ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Ասրպատականի թեմի կացութեան և կարիքների վերայ:

Մեծ Մասիսի կրճ.քից մինչև Կասպից ծովը և Արաքսից մինչև Ուրմիոյ լճի հարաւային Միանդաբ և Սօուդբուլաղ գաւառներն ընկնող տարածութիւնը կազմում է մի ընդարձակ փոխարքայութիւն, որի վարիչն է ըստ սովորութեան Պարսից Շահի դահաժառանգը, և նոյն այդահադին տարածութիւնն է բռնում Ատրպատականի թեմը: Այդ երկրի 14 ընդարձակ գաւառներում և Մակուի խանութեան մէջ ապրում է մօտաւորապէս 48,000 հայ ժողովուրդ, որ պարապում է երկրագործութեամբ, վաճառականութեամբ և արհեստներով: Եթէ միացնելու լիւնենք Երևանի, Դանձակի և Բաքուի նահանգները՝ նոր միայն կստանանք Ատրպատականի թեմի չափ մի տարածութիւն, ուր ցրուած են հայութեան այնքան սակաւածիւ մնացորդները: Ատրպատականի թեմում բացի առաջ-

նորդից, որը նստում է Թաւրիդում, լինում են երկու վանահայրեր՝ ս. Թադէոս առաքելոյ և ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերում: Երբեմնակի եղել է և մի փոխանորդ Սալմաստի և Ուրմիոյ համար, բայց մշտական հաստատուն եկեղեցական վարչութիւն իւր պահպանութեան որոշակի միջոցներով՝ երբէք նա չի ունեցել. նոյն իսկ առաջնորդի ապրուստը կախում է եղել իրեն առաջնորդի սխրագործութիւնից: Ունենալով ցանուցիր ժողովուրդ, ենթակայ բազմատեսակ միախնարների ազդեցութեան, կիսով չափ Ռուսաստան գաղթած և պարսիկ պաշտօնէութիւնից կեղեքուած, այլ և զուրկ լինելով փոքր ի շատէ օրինաւոր գործակալներից՝ այս թեմը չորս հինգ տարիներով ամբողջ գաւառներից ոչ մի կոպէկ տուրք չի տալիս թեմական դիւանին ընթացիկ ծախուց համար:

Առաջնորդարանի շինութիւնը հին է և աղքատ. ամենակարևոր կահկարասիք չունի առաջնորդարանը, այլ թատերասէրներից փոխ առած աթոռներով է կառավարւում. դիւանը անկանոն, ոչ մի կարգին գործ չէ սկսուած, —կատարեալ քաօս: Եթէ դորա վերայ աւելացնենք այն հանգամանքը, որ ամբողջ թեմում չկայ թեմական դպրոց կամ նոյն իսկ Արամեան դպրոցն աւարտած մի հասականայ, որ ձեռնադրուած են գրագէտ խոհարարներ, դպրոցների ծառաներ, դերձակներ, կամ գաղթական՝ շատ անգամ՝ ամենատխուր անցեալ ունեցող անձինք, շատ քիչ բացառութեամբ, կստանանք այն պատկերը, որ ներկայացնում է Թաւրիդի թեմի հայ հոգևորականութեան վիճակը: Տասնեակ տարիների ընթացքում գործակալական պաշտօն են վարել աշխարհական անձինք, որոնցից շատերն անինսայ կեղեքել են ժողովրդին, եղել են մի մի փաքիկ բռնակալ, իսկ առաջնորդարանի և մասնաւոր գործերի համար—միանգամայն անօգուտ:

Յաճախակի մեզ պատահում է կարդալ նաև դպրոցների և գրագարան-ընթերցարանների մասին: Չտիեղ ենք յետոյ կարգացածը մեր տեսածի և հասկացածի հետ և

իրականութիւնը շատ հեռի գտել երևոյթից։ Ամբողջ Ատլանտիկականում մի միայն թաւրիղի, Հաթիթուանի և Ղալապարի գրադարաններն են փոքր ինչ գրադարանի նման։ Մինի խելքին փչում է բանալ գրադարան ընթերցարան, հաւաքում է մի հինգ հոգի, կազմում է կանոնադրութիւն իրեն հասկացածի չափով, առաջարկում է Առաջնորդին ի հաստատութիւն, մի քանի գիրք է գտնում, մի երկու թերթ բերել տալիս՝ յաճախակի միայն մուրացկանութեամբ, և արդէն գրադարանը պատրաստ է։ Էլ հանգէս, էլ մաղթանք, լրագրական յօդուածներ, էլ աղմուկ, մինչև որ անցնում է մի քանի ամիս և տեսնում էք, որ գրքերը տարուել են մի որ և է մասնաւոր անձի մօտ և գրադարանը փակուել է։

Նոյնպիսի վիճակ են ունեցել ցայսօր և դպրոցները։ Ոչ ծրագիր կայ, ոչ կանոնաւոր նիւթական միջոց և ոչ հսկողութիւն։ Որոնում են գլխաւորապէս էժանագին՝ տարեկան—100—180 ռուբլիանոց, վարժապետներ։ Բողոքական միսիօնարական նորմալ դպրոցի աշակերտը համարում է լաւ ուսուցիչ, իսկ կիսագրագէտ դաղթականներ—որքան և ինչ տեսակի ուղէք կգտնէք։ Ամբողջ թեմում չկայ դասագրքերի պահեստ կամ գրախանութ, թաւրիղում և Ատլանտիկականում չէք գտնի նկարչական պիտոյքներ, աշխարհագրական քարտէզներ, դիտողական ուսման համար հարկաւոր պատկերներ, ժողովածուներ և այլն, առանց որոնց անհնարին է դպրոցական գործի կանոնաւոր ընթացքը։ Եւ յանկարծ այդ դրութեամբ գոյութիւն ունին մօտ 24—30 դպրոցներ, որոնք նիւթականի կամ ուսուցչի բացակայութեան պատճառով երբեմն տարիներով փակ են մնում։ Եթէ քրքրելու լինէք ամբողջ առաջնորդարանը, չէք գտնի մի գործ, որից կարելի լինէր գէթ մօտաւոր գաղափար կազմել դպրոցական գործի մասին։ Այսպէս ահա ծախսում են գումարներ, տեղի է ունեցել և ունի աղմուկ, իսկ արդիւնքն եղել է կամ չնչին և կամ ոչինչ։

Համեմատաբար աւելի կանոնաւոր վիճակ ունին թաւ-

ընդի Սրամեան և Հայկազեան դպրոցները, բայց ասում ենք համեմատաբար, որովհետեւ նրանք էլ բարեկարգ վիճակ ունենալուց շատ և շատ հեռու են։ Իրաւ է, տարեկան ծախսովում է 14,000 ռուբլուց աւելի մի դումար, որչափով երկար տարիների ընթացքում պահպանուել են մեր թեմական դպրոցները, բայց ասում ենք, որ այստեղ էլ արդիւնքը շատ փոքր է՝ հետեւեալ պատճառներով։ Այդ երկու դպրոցների աշակերտաց թիւը հաղիւ հասնում է 250-ի, որոնք տեղաւորուած են 17 դասարաններում։ Օւրեմն մօտաւորապէս 15 հոգի իւրաքանչիւր դասատանը։ Նոյն են օրիորդաց դպրոցները։—Եւ ահա մինչդեռ երկու դպրոցների գէթ բարձր դասարանների աշակերտներին ի միասին տեղաւորելով կարելի էր հրաւիրել աւելի պատրաստուած ուսուցիչներ՝ մասնագիտական կրթութեամբ, և հետեւապէս շատ աւելի հիմնաւոր կերպով առաջ տանել դպրոցական դործը, — ուժերը զուր տեղ բաժանուում են և ծախսի համեմատ արդիւնք չի ստացւում։ Ուսուցչական խմբի մեծամասնութիւնը կաղմուած է մեր թեմական դպրանոցներն աւարտածներից և երբեմն էլ 3-դ 4-դ դասարանից հեռացրած աշակերտներից, որոնք ոչ թէ միանգամայն անպատրաստ են յիշեալ դպրոցների (որոնք 5 և 6 դասարանեան են) ուսուցչութեան համար, այլ ուղղակի ուսուցչական կոչման անարժան, որովհետեւ հասկացողութիւն չունին մանկավարժութեան, հոգեբանութեան, մեթոդիկայի, և նոյն իսկ աւանդելիք առարկաների մասին։

Թաւրիղում կան՝ լսարան, երկու գրադարաններ, երկու մանկասպարտէզ, արհեստանոց օրիորդների համար, գինեհատից ընկերութիւն, Աղքատախնամ և Հայուհեաց միացեալ պատկառելի ընկերութիւն, որոնք պարապ չեն, դործ են կատարում։ Բայց ինչ արած, որ չկայ մի կարգ, խիստ մշակուած ընթացք ու ծրագիր։ Ի՞նչ կարելի է սպասել, երբ ամեն ինչ կախուած է անձնաւորութիւնից և նրա կամքից ու քմահաճութիւնից, երբ չկայ մի մշտական հսկող մարմին և որոշ ծրագիր, որը պարտադիր լինի

ամէնքի համար: Ամբողջ թեմը ծանրանում է առաջնորդարանի վերայ, որն եթէ ճշտապահ լինի իւր պաշտօնական գրագրութեանց մէջ և պատասխանէ երբ և ում պէտք է, ամբողջ եկամտի կէսը հարկաւոր կլինի փոստային և հեռագրական ծախուց համար: Մոռանալու չէ, որ Ատրպատականը կառավարւում է պարսկական ադաթներով և պարսիկ վարիչներով, որոնց նպատակը մի միայն կեղեքելն ու հարստահարելն է, որտեղ կաշառքը նուիրագործուած և ընդունուած յայտնի տուրք է, ուր չկայ արդարադատութիւն, դատարան և այլն, և ուր հայ ժողովուրդը առաջնորդարան է վազում իւրաքանչիւր քայլափոխում: Նօտարական, ժառանգական, վարչական, դատաստանական, կրօնական, եկեղեցական և այլ բազմաթիւ գործեր ծանրանում են առաջնորդարանի վերայ: Առաջնորդն է հայ ժողովրդի վշտի և ուրախութեան թարգմանը կառավարութեան առաջ: Առաջնորդն է կեղեքումներից տանջուած հայ ժողովրդի հառաչանքն ու բողոքը տեղը հասցնողն և դարման խնդրողը: Նա պէտք է որոշ կապեր պահպանէ հիւպատոսների և հիւպատոսարանների հետ: Նա պէտք է վարկ և պատիւ ունենայ Պարսից իշխանութեան առաջ, կապեր պահպանէ դաւառական պաշտօնեաների հետ, և այլն և այլն: Այս բոլորի համար հարկաւոր է միջոց և ժամանակ, հարկաւոր են ընդունակ գործակիցներ և օգնականներ, հարկաւոր է մատիմատիքական հաշիւ և ճշտութիւն, մի խօսքով ոչ մի տեղ առաջնորդի պաշտօնն այնքան դժուարին և բարդ չէ՝ որքան Ատրպատականում: Կարծում եմ այս է գլխաւոր պատճառը, որ բացի Սահակ եպիսկոպոս Սաթունեանից, որ առաջնորդ է եղել դեռ հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսի ժամանակ, ոչ մի առաջնորդ գրական գործերի հետք չի թողել Ատրպատականում: Չի երևում ոչ մէկի ձեռքը և ոչ մի հիմնարկութեան վերայ, և եթէ մէկը կարողացել է մի քանի դէպքում աչքի ընկնելու կերպով պաշտպանել հայ ժողովրդին, վարչութեան ներկայացուցիչների կաշառակերութիւնից և բէկերի ու խաների կո-

դողովուրդ, նա արդէն ժողովրդականութիւն է ձեռք բերել և անմահացել՝ ինչպէս օր, հանգուցեալ Վեհապետեան և Մխիթարեան եպիսկոպոսները, որոնք ազատ չեն եղել հարկաւ ամենախոշոր թերութիւններէ:

Արարատականի թեմի այս խեղճ դրութեան վերայ հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել: Մի կարևոր հանգամանք ևս մոռանալու չէ: Պարսկաստանում դեռ այն շրջանն է, երբ համեմատաբար ամենազարգացած մեծամասնութիւնը կազմում են հայերը, երբ նոքա հանդիսանում են ամենալաւ նախաձեռնողներ և միջնորդներ Պարսկաստանի և Եւրոպայի մէջ: Վաղը, միւս օրը կը դան օտարազդիք՝ նոցանից աւելի պատրաստուած և մեծ դրամագլուխ ունեցող, որոնք ամեն ինչ կառնեն նոցա ձեռքից, կտիրանան պարսկական արդիւնաբերութեան և ներմուծութեան, և նոքա կգառնան սև բանուորներ, օրավարձով աշխատողներ՝ նոցա աչքի առաջ կտիրանան նոցա բոլոր ունեցածին: Պարսկահային հարկաւոր է շտապել, հարկաւոր է ձեռք բերել գործնական գիտութիւն և գեղեցիկ կրթութիւն, նա իւր վարքով, իւր ուսմամբ, հաւատարմութեամբ և մաքուր ու բեղմնաւոր աշխատանքով պէտք է ժողովրդի ամենակարևոր տարրը լինի, պետական մեքենայի ամենաանհրաժեշտ մասը կազմէ՝ առանց որի չէր կարող բեղմնաւոր դոյութիւն ունենալ այդ մեքենան: Հայ ժողովուրդը, թէև այլակրօն, պէտք է երևան հանէ Պարսկաստանում իւր ամենագեղեցիկ պատմական յատկութիւնները, պէտք է կատարէ իւր միասին և Պարսկաստանից դուրսն էլ մեզ դատաւիտողներին ու թթու հայակերներին ցոյց տայ, որ սխալուած և մոլորութեան մէջ են: Կառավարութեան բարձր շրջաններն անպայման բարեհաճ են դէպի հայ ժողովրդի կրթական շարժումն ու գեղեցիկ ձգտումները, իսկ Շահն-Շահի նախանցեալ թուին հանած ֆիրմանը ցանկալի ազատութիւն է տուել նորան գործելու և ամեն տեսակ դպրոցներ ունենալու: Ի՞նչ պէտք է անել ուրեմն, ինչից սկսել և ինչպէս, որ անցեալի սխալները տեղի չունենան:

Ըստ իս հարկաւոր է նախ որոշ կարգ ու կանոնի տակ դնել թեմական վարչութիւնն և առաջնորդական պարտիքն ու իրաւունքը որոշել: Վարչական, կրթական և տնտեսական գործերին պէտք է մասնակից անել աշխարհական տարրը՝ ի հարկէ ընտրական որոշ սկզբունքով: Պէտք է ստեղծել թեմական տեսչութիւն իւր օգնական մարմիններով: մշակել որոշ ծրագիր գաւառական տարրական և մասնագիտական դպրոցների համար: Թաւրիշում բանալ միջնակարգ բազմաբուհատեան դպրոց: Պէտք է պահել երկու փոխանորդ Սալմաստ-Ուրմիոյ և Ղարադաղի գաւառների համար, որոնց և կարելի է հաւատալ թեմական տեսչի պաշտօնը: Պէտք է վերացնել նոցա ապրուստի ներկայ պարսկական սիստեմը իւր բոլոր բացասական կողմերով և առաջնորդից սկսած մինչև թեմական տեսչի համար նշանակել որոշ ռոճիկներ, ապա թէ խիստ կերպով պահանջել իւրաքանչիւր պաշտօնէից իւր պարտականութեանց անթերի կատարումն: Այսպէս, երբ կը միանան ներկայումս անսիստեմ և բաժան բաժան գործող մարմինները և «յանուն գործի և ապագայի» կնուիրեն իրենց ստանձնած պաշտօնին, այն ժամանակ գործերի ընթացքը կախուած չի լինի պատահականութիւնից և կարելի կլինի ստեղծել ցանկալի դրութիւն՝ յուսալի ապագայ:

Դորա համար անհրաժեշտ է ամէնից առաջ տնտեսական դրութիւնը բարւոքել, իսկ տեղական միջոցները շատ և շատ չնչին են և անբաւարար: Չունենալով ընդունակ օգնականներ և ժամանակ, կառավարելով բազմակարօտ և ցրուած մի թեմ, առաջնորդները չեն կարողացել կանոնաւորապէս հսկել եկեղեցական դրամների անկորուստ պահպանութեան և այդ եկամուտներն աւելացնող միջոցների վերայ: Չեն եղել կանոնաւոր հաշուեմատեաններ, չի եղել վերաստուգիչ մարմին, և ամեն ինչ մատնուած է եղել կամայականութեան: Ստրպատականից դուրս եղած հարուստ հայ եկեղեցիները կարող էին օժանդակութիւն հասցնել, պէտք է միայն ճանաչեն չքա-

ւոր քրոջն օգնելու պարտականութիւնը և լաւ զգան, թէ որչափ ծանր է և ստիպողական այստեղ պահանջը: Մի՞թէ աւելի բարւոք չէր լինի նպաստել Պարսկահայոց եկեղեցական-կրթական դործին, քան անարժան երեցփոխաններին աւար դարձնել եկեղեցական դրամները: Հրաւիրում ենք այս բանի վերայ իշխանութեան հետ և ձեռնհաս անձանց լուրջ ուշադրութիւնը: Ժամանակը մեզ չի սպասում. բաւական պէտք է համարենք եղած փորձերը և շտապենք խելացի և բեղմնաւոր հիմունքների վերայ դնել գործը:

Ե. ծ. վ. Մ.

Ս. ԳՐՈՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ.

Այժմ շուտ շուտ է արժարժվում ս. Գրոց նոր տպագրութեան խնդիրը: Իսկ խնդիրն աւելի բարդ կերպարանք ունի, քան թուում է: Ոմանք ժողովրդեան որոշ կարիքներն աչքի առաջ ունենալով, պահանջում են ս. Գրոց աշխարհաբար թարգմանութեան տպագրութիւնը. իսկ ոմանք ազգային պատուի նախանձախնդիր լինելով, հարկաւոր են համարում՝ ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագիրների բարեխիղճ համեմատութիւններով ձոխացած՝ նախնեաց անեղծ և անարատ թարգմանութեան լոյս ընծայելը:

Աշխարհաբար թարգմանութիւնն առաւելապէս զրաւանական խնդիր համարելով, իսկ նախնեաց թարգմանութեան համեմատական տպագրութիւնը բուն եկեղեցական՝ միանդամայն և զիտութեան խնդիր ճանաչելով, տարակոյս չկայ, որ դոքա այնքան հասունացել են, որ այլ ևս անտեղի կլինի յետաձգել դոքա լուծումը: Հետեւապէս ոչ մի զոհողութիւն չպէտք է խնայել, որ այդ գործերը օր առաջ ձեռնարկուին: Մինչև անգամ այդ երկուսի մէջ առաջնութեան խնդիր